Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 060 27 48 04, 060 27 48 05
fax 060 27 48 03
news@aravot.am
www.aravot.am

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 200 դրամ

# Առավոտ

aravot daily

118/7346/ 15 հուլիս 2025 երեքշաբթի

ISSN 1829-2224
25118

## Ա

## Քանի Գագանը չի նահանջել

Ատորինաբար հետադիմող գործարար Սամվել Կարապետյանը կուսակցություն է ստեղծում: Հայաստանի բոլոր քաղաքացիները, որոնք դեռեւս չեն կորցրել ադեկվատությունը, պետք է, ենթադրում եմ, այդ կուսակցությանը հաջողություն ցանկանան՝ զերծ մնալով խանդից ու բամբասանքներից: Բայց հաջողություն չի լինի, եթե այդ նոր քաղաքական ուժը գործի մեկուսացված ու մաս չկազմի լայն համախմբման:

Ի՞նչ է դրա համար պետք:

Հավանաբար, կարեւոր նախապայմաններից մեկն այն է, որ առաջին, երկրորդ եւ երրորդ նախագահները, ՀՅԴ-ն, ՀՅԿ-ն, Սամվել Կարապետյանը եւ բոլոր նրանք, ովքեր հասկանում են Փաշինյանի հետագա կառավարման աղետալի հետեւանքները,

## Թրամփը Patriot համակարգեր կուղարկի Ուկրաինա

*ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ Ուկրաինա կուղարկի Patriot զենիթահրթիռային համակարգեր, որոնք անհրաժեշտ են երկիրը պաշտպանելու համար: Սպիտակ տան ղեկավարը եւս մեկ անգամ դժգոհություն է հայտնել Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինից՝ ասելով, որ նա «գեղեցիկ խոսում է, բայց հետո երեկոյան ռմբակոծում է բոլորին»: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին հաղորդում է Reuters գործակալությունը:*



*Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկին խնդրել էր ավելի շատ պաշտպանական զենքեր տրամադրել Կիեւին՝ Ռուսաստանի կողմից շարունակաբար արձակվող հրթիռները եւ անօդաչու թռչող սարքերը հետ մղելու համար:*

## Ծ Ա Ն Ո Ւ Ց Ու Մ

## ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ ՄԱՍԻՆ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ Կառավարության «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» 2014 թ. Նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ (խմբագրված ՀՀ կառավարության 28.12.2023, N 2343-Ն որոշմամբ) սահմանված կարգով 2025 թվականի օգոստոսի 13-ին ժամը 11:00-ին ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի Քարաբերդ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի կունենա հանրային լսումներ (քննարկումներ): Հանրային լսումը կազմակերպվում է ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի Քարաբերդ բնակավայրի տարածքներում ստորև բերվող ծայրակետային կոորդինատներով սահմանափակված՝ Քարաբերդի ոսկու հանքավայրի արևմտյան և արևելյան տեղամասերում, օգտակար հանածոի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության նախատեսվող աշխատանքների վերաբերյալ:

| | | | |
|---|---|---|---|
| 1. X=4520782.9197 | Y=8459509.1344, | 2. X=4521990.6343 | Y=8459888.3364 |
| 3. X=4522062.7199 | Y=8460909.1095, | 4. X=4522037.7371 | Y=8460907.1894 |
| 5. X=4521912.5761 | Y=8460812.5684, | 6. X=4521785.2231 | Y=8460918.2564 |
| 7. X=4521707.2335 | Y=8461061.1637, | 8. X=4521342.5346 | Y=8460857.5328 |
| 9. X=4521374.0503 | Y=8460813.9816, | 10. X=4521344.9678 | Y=8460710.7162 |
| 11. X=4521566.4049 | Y=8460578.2212, | 12. X=4521513.1371 | Y=8460484.7334 |
| 13. X=4521193.8604 | Y=8460400.2589, | 14. X=4520955.6467 | Y=8460225.7404 |
| 15. X=4521008.6656 | Y=8460191.2160, | 16. X=4521015.5781 | Y=8460096.2514 |
| 17. X=4520938.4131 | Y=8460045.5964, | 18. X=4521098.1544 | Y=8459944.1440 |
| 19. X=4521084.1941 | Y=8459846.5914, | 20. X=4521014.4761 | Y=8459817.3934 |
| 21. X=4520948.1071 | Y=8459824.7104, | 22. X=4520752.9494 | Y=8459616.6995 |

և

| | |
|---|---|
| 1. X=4523641.2667 | Y=8457613.3137 |
| 2. X=4523685.0560 | Y=8457616.6904 |
| 3. X=4523871.7290 | Y=8457761.7182 |
| 4. X=4523960.2594 | Y=8457748.3160 |
| 5. X=4522446.0938 | Y=8459014.3746 |
| 6. X=4521410.1564 | Y=8458783.8113 |
| 7. X=4521504.8467 | Y=8458658.6876 |

**Ձեռնարկող՝** «Զով-Գոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն:

**Նախատեսվող գործունեության իրականացման վայրը՝** ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնք /Քարաբերդ բնակավայր/:

**Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունը՝** Հնարավոր է որոշակի ազդեցություն շրջակա միջավայրի բաղադրիչների վրա, սակայն նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բոլոր ազդեցությունները պետք է գնահատվեն և ներառվեն մեղմացուցիչ միջոցառումների, որի արդյունքում շրջակա միջավայրին հասցվող վնասը կհասցվի նվազագույնի:

**Փաստաթղթերին ծանոթանալու վայրը, օրը և ժամը՝** ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի պաշտոնական կայքում (http://pambak.am, հանրային լսումներ բաժնում), Փամբակի համայնքապետարանում և Քարաբերդի վարչական կենտրոնում, սույն հայտարարության հրապարակման օրվանից անեն օր՝ ժամը 14:00-ից 16:00-ն մինչև դիտողությունների և առաջարկությունների ներկայացնելու ժամկետի ավարտը:

**Դիտողությունների և առաջարկությունների ներկայացնելու ժամկետը՝** 20 աշխատանքային օր՝ հաշված սույն ծանուցման հրապարակման օրվանից:

**Քննարկումների պատասխանատու՝** ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ղեկավար:

**Քննարկումների պատասխանատուի էլ. փոստի հասցեն և հեռախոսահամարը՝** էլ. փոստ՝ pam-bak@mail.ru, info@pambak.am

հեռ.՝ +374-98-66-16-62, +374-77-75-88-63

***ՓԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ***

## Առաջարկների բաց հարցման անցկացման մասին Ծանուցում

1. Առաջարկների բաց հարցման Կազմակերպիչ հանդիսացող Պատվիրատուն՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ, (Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Արմենակյան փ. 127., հեռ. (+374 - 11) 59-13-43, 59-13-42 e-mail: Karapetyan_HG@ena.am,Sargsyan_SM@ena.am,petrosyan_ak@ena.am, սույնով հայտարարում է Պատվիրատուի կարիքների համար եռաֆազ և միաֆազ էլեկտրոնային բազմասակագնային դարձափոխիչային հաշվիչների մատակարարման Առաջարկների բաց հարցման շրջանակներում հայտերի ընդունման ժամկետների երկարաձգման վերաբերյալ:

2. Առաջարկների բաց հարցման մասնակիցներին ներկայացվող պահանջները և աշխատանքների ու Առաջարկների բաց հարցման ընթացակարգի նախաձման նկարագիրը ներառված են Առաջարկների բաց հարցման փաստաթղթերում, որոնք կտրամադրվեն ցանկացած մասնակցի, համաձայն նրա գրավոր պահանջի՝ ըստ հետևյալ կարգի Առաջարկների բաց հարցմանը մասնակցելու նպատակով տրամադրվող փաստաթղթերի փաթեթը կարելի է ստանալ՝ ներկայացնելով մասնակցին անհատականացնող (առեւտրային կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականի պատճենը, հրավերն անմիջականորեն ստացող անձի (եթե դա առանց լիազորագրի գործելու լիազորություն ունեցող անձը չէ) լիազորագիրը ու նրա անձը հաստատող փաստաթուղթը:

3. Առաջարկների բաց հարցման հայտերը ներկայացվում են փակ ծրարներով սույն Ծանուցման 1-ին կետում նշված Պատվիրատուի հասցեով՝ ոչ ուշ քան 2025 թվականի օգոստոսի 4-ը ժամը 10:00-ը (տեղական ժամանակ), համապատասխան Առաջարկների բաց հարցման փաստաթղթերի պահանջներին: Պատվիրատուն կիրականացնի ծրարների հրապարակային բացման ընթացակարգը 2025 թվականի օգոստոսի 4-ին, ժամը 11:00-ին (տեղական ժամանակ)՝ սույն Ծանուցման 1-ին կետում նշված հասցեում: Այդ ընթացակարգի անցկացման ժամանակ կարող են ներկա գտնվել Առաջարկների բաց հարցման Մասնակիցների ներկայացուցիչները:

4. Սույն ծանուցումը, ինչպես նաև առաջարկների հարցման փաստաթղթերը օֆերտա չեն հանդիսանում:

